ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ *Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը գրականության դասերին՝ որպես սովորողների ներգրավվածությունը բարձրացնող միջոց*

Կազմեց՝ *Թերմինե Սամվելի Գևորգյան*

(անուն ազգանուն)

<<Ագարակի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ *Լուսինե Սողոմոնյան*

<<Կապանի N2 ավագ դպրոց >>ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Ինչպե՞ս է մարդը սովորում 5

Ակտիվ ուսումնառության մեթոդներ 7

Ակտիվ մեթոդների կիրառումը գրականության դասերին 19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....28

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 29

Հավելված 1

Հավելված 2

Հավելված 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:

ՀՀ տարրական և միջնակարգ դպրոցներում դասավանդվող առարկաների համար դպրոցական դասագրքերում առաջարկվող մեթոդները չեն խթանում աշակերտների ակտիվ մասնակցությունը, վերլուծական և քննադատական միտքը:

Ուսուցման արդյունավետ հնարները օգնում են տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչներին՝ իրենց դասաժամերը ավելի ակտիվ, մասնակցային կազմակերպելու, աշակերտների մոտ քննադատական և վերլուծական միտքը խթանելու համար:

Այս հետազոտական աշխատանքում դիտարկվել են գրականության դասաժամերին ակտիվ ուսումնառության մեթոդների հնարավորություններն ու առանձնահատկությունները,ներկայացվել են դրանց արդյունավետ կիրառման մի շարք օրինակներ :

Ուսումնասիրության առարկան :

Մեր ուսումնասիրության առարկան դպրոցում Հովի. Թումանյանի «Անուշ» պոեմի ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունների, պոեմի բովանդակության, հերոսների հոգեբանության ուսումնասիրման համար կիրառվող և առաջարկվող հնարների ու մեթոդների համակարգն է :

Ուսումնասիրության նպատակը:

Մեր ուսումնասիրության նպատակն է Հովի. Թումանյանի «Անուշ» պոեմից վերցված օրինակների հիման վրա ցույց տալ,թե ինչպես կարելի է ուսումնական գործընթացում կիրառել ակտիվ մեթոդները՝ նպաստելով նյութի յուրացման արդյունավետությանը :

Ուսումնասիրության խնդիրները:

Ուսումնասիրության մեջ առաջ են քաշվել նպատակից բխող հետևյալ խնդիրները՝

1. **ուսումնասիրել** «Անուշ» պոեմի ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները, պոեմի բովանդակությունն ու հերոսների հոգեբանությունը :

2. **առանձնացնել** պոեմի նախերգանքն ու վերջերգը՝ մեկնաբանելու համար պոեմի արտահայտած գաղափարը :

3. **ներկայացնել** «Անուշ» պոեմի ուսումնասիրումը՝ակտիվ մեթոդների կիրառմամբ:

Ուսումնասիրության մեթոդները:

Թեմայի ուսումնասիրությունը կատարել ենք բնագրային աշխատանքի, ուսումնասիրվող հիմնահարցին առնչվող տեսական ու մասնագիտական գրականության վերլուծության, համադրման, վիճակագրական հաշվարկի մեթոդներով:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Ակտիվ ուսումնառության մեթոդների ուսումնասիրությունը կատարել ենք Հովի. Թումանյանի « Անուշ » բնագրային օրինակների հիման վրա: Մեր ներկայացրած տեսական նյութը և առաջարկած մեթոդական եղանակներն ու միջոցները կարելի է կիրառել հանրակրթական դպրոցում տվյալ թեմայի դասավանդման ժամանակ: Այն սովորողներին լրացուցիչ գիտելիքներ կհաղորդի և կնպաստի նրանց մտածական կարողությունների ու հմտությունների զարգացմանն ու ակտիվությանը դասին:

Աշխատանքի կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ակտիվ ուսումնառության մեթոդների տեսական մասից, պոեմի ուսուցման առանձնահատկությունները

ներկայացնող մեթոդական մասից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Աշխատանքը բաղկացած է 37 էջ համակարգչային շարվածքից :

ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐԴԸ ՍՈՎՈՐՈՒՄ

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը:

Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը :



Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:

Ցավոք, մեր կրթական համակարգը կառուցված է այնպես, որ մենք ավելի շատ մակերեսային բաներ ենք սովորում: Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն :

1. Ուսուցման արդյունավետ հնարներ , Երևան 2020թ էջ 9-12

ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Բայց , նախ խոսենք այն մասին , թե ի՞նչ է իրենից ներկայացնում ուսուցման մեթոդը:

Ուսուցման մեթոդը / հունարեն metodos՝ ճանապարհ ինչ-որ տեղ, ինչ-որ բանի տանող / : Եթե փորձենք ընդհանուր առմամբ բնութագրել մեթոդը , ապա կարող ենք ասել , որ այն մանկավարժական գործունեության մի միջոց է , հնար , հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնասիրության նախանշված արդյունքին : Ուսուցման մեթոդն իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝

- *ի՞նչ սովորեցնել* / կրթության բովանդակություն/
- *ինչու՞, ինչի՞համար սովորեցնել* /կրթության նպատակներ /
- *ինչպե՞ս սվորեցնել* / ուսուցման մեթոդիկա / :

  Այս բոլորի իրականցման համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ , հնարներ, ձևեր , որոնք , հանդիսանալով ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչ , կապ են ստեղծում պլանավորած նպատակի և վերջնական արդյունքի միջև :[2]

2. Վ. Գյուլազյան,Լ. Առուշանյան , Մ. Գասպարյան «Ուսուցչի ուղեցույց տետր» Երևան 2009 էջ13

Վերջին շրջանում մանկավարժական գրականության մեջ շատ է խոսվում ինտերակտիվ / համագործակցային մեթոդների արդյունավետ կիրառման մասին ։

Ինտերակտիվ տերմինը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. անգլերեն «inter»- փոխադարձ , «act» - գործողություն ։ Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի , երկխոսության մեջ գտնվել ինչ–որ մեկի կամ համակարգչի հետ ։ Այսպիսով , ինտերակտիվ ուսուցումն առաջին հերթին ուսուցում է *երկխոսության միջոցով* ։ Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման , սովորողի ազատության վրա ։ Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր ։ Ցանկացած դասարան , դասապրոցես եզակի է , անկրկնելի ։ Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին , և չասել , օրինակ , որ ԴՆԹ- ի դասավանդումը հնարավոր չէ կատարել «խճանկար» մեթոդով ։

Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում ։ Բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել , քանի որ մեթոդի կիրառման բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է կամ բաց դասի ընթացքում գործընկերների առջև մանկավարժական վարպետությամբ փայլելը , այլ առաջին հերթին մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ ուսուցման նպատակների իրականացման հասնելը ։ Այլ կերպ ասած ՝ պետք է ոչ թե «տեխնիկա ցուցադրել» , այլ հասնել դասի ՝ նախապես ծրագրված նպատակին ։ Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու,

ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Դասապրոցեսը բաժանենք երեք մասի՝ յուրաքանչյուրի համար առաջարկելով մեթոդներ և հնարներ .

1. Դասի սկիզբ

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

1. **Խորհրդավորություն**

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են բոպե առաջ բացահայտել գաղտնիքը:

Հետևյալ նախադասությամբ.

«Ես մտքիս մեջ բան եմ պահել : Այն վերաբերում է մեր ուսումնասիրած թեմաներից մեկին : Դուք պետք է ինձ հարցեր տաք: Ես կարող եմ պատասխանել «այո» կամ «ոչ» տարբերակով : Դուք պետք է հարցերն այնպես ձևակերպեք, որ «այո» կամ «ոչ» պատասխանը ձեզ օգնի հասկանալ, թե ինչ եմ մտապահել »:

2. Գուշակություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ ուսուցիչն առաջարկում է թղթի վրա գրել ամենասիրած ֆիլմի կամ հեքիաթի անունը և մտապահել: Այնուհետև ուսուցիչը թղթերը հավաքում է և խառը բաժանում աշակերտներին: Աշակերտները փորձում են գուշակել, թե ով է գրածի հեղինակը:

3. Զարմանք , անսպասելիություն

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է: Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը: Օրինակ՝ կարելի է

դասի սկզբում հարցնել՝ ի՞նչ կլիներ, եթե Մոսին ու Սարոն կռիվ չբռնվեին:

Մեկ այլ տարբերակ է աշակերտների կողմից ուրիշի դեր ստանձնելը: Օրինակ՝ պատկերացրեք դուք Իսրայել Օրին եք: Ինչպե՞ս կվարվեիք:

4. Մեջբերումներ

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն:

5. Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:



6. Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի

համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

7. **Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն**

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել:

5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը: Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ: Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի պատկերներով: Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը 30 զուգակցվում են: Ստորև ներկայացված են գծապատկերների մի քանի օրինակներ:

Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է հաճախակի

օգտագործել «սատանայի վկա» հնարը : Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր

սխալ է ասում ,որպեսզի ստուգի որքան ուշադիր է դասարանը իրեն լսում :

Հաճախ ուսուցիչներին թվում է, թե այդ դեպքում աշակերտները կարող են մտածել, որ իրենց ուսուցիչը չի տիրապետում նյութին և սխալ բաներ է ասում: Բայց մի քանի անգամ կիրառելուց հետո աշակերտները կհասկանան, որ դա մանկավարժական հնար է: «Սատանայի վկա» հնարի կիրառումը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու լավ մեթոդ է:

1. **Կենտրոններով աշխատանք**

Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին:

Կենտրոններ.

• *հետազոտողների կենտրոն - Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ*

• ***ստեղծագործողների կենտրոն*** - *Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն:*

• ***գրավոր աշխատանքի կենտրոն*** - *Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան:*

• ***բացահայտողների կենտրոն*** - *Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:*

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:



Ուսումնական նյութը մատչելի դարձնելուն շատ են օգնում դիդակտիկ պարագաները և նյութերը՝ այն ամենը, ինչը ակադեմիական կրթությունը մոտեցնում է կյանքին:

3. Սովորածը պարզելու հնարներ

1. **Ֆրայերի մոդելը-** Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:



2. **Գիտելիքի դոմինո**

Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1 - Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2 - Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:

Քայլ 3 - Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4 - Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5 - Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Օրինակ՝ արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության:

Քայլ 6 - 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

3. Ես-Դու-Մենք

Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

4. Լուսակիր

Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները: Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին:

Յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը:

Ամբողջությամբ յուրացրել է

Մասնակի է յուրացրել

Չի յուրացրել

Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային: Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին:

5. «Խաթարված հերթականություն»

Այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը. պետք է նախօրոք պատրաստել թղթեր, վրան գրել տեքստից ընտրված կարևոր անունները, փաստերը, իրադարձությունները: Դրանք խառը հերթականությամբ փակցնել գրատախտակին, հետո խնդրել, որ այն դասավորեն հերթականությամբ:

6. Միավորային գնահատման իրականացում Quizizz առցանց գործիքի միջոցով -

Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը: Սովորողները հարցադրումներին հետևում և պատասխանները նշում են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ: Հարցման ավարտին հնարավոր է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները: Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը, և՛ ճշտությունը: Վարժություններ ստեղծելիս հնարավոր է բազմակի ընտրանք ձևաչափով հարցադրումներ կազմել: Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով:

Quizizz առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնելու հետևյալ աշխատանքները.

- *միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ,*
- *պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց,*
- *առցանց հետևել սովորողների առաջադիմությանը,*
- *հղմամբ տարածել պատրաստի վարժությունները,*
- *յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ,*

- *հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը:*

Quizizz առցանց տիրույթ մուտք գործելու, գրանցվելու և աշխատելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը. ցանկացած զննարկիչում գրել quizizz.com հասցեն և մուտք գործել:

Quizizz առցանց գործիքի կիրառման արդյունքում կունենաք.

- ✓ *միավորային գնահատում իրականացնելու համար առցանց թեմատիկ վարժություններ,*
- ✓ *պատրաստի վարժությունները հղմամբ առցանց տարածելու հնարավորություն,*
- ✓ *սովորողների առաջադիմության միավորային արդյունքները ներբեռնելու հնարավորություն և դրանց վերլուծություն.*[4]

4. Ուսուցման արդյունավետ հնարներ , Երևան 2020թ էջ 22-49

ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

/Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի ուսումնասիրումը/

Թումանյանի պոեզիան առավելագույն ուժի է հասնում քնարական պոեմներում, որտեղ տեսնում ես ժողովրդական կյանքի խոր ճանաչողություն և աշխույժ ներթափանցում ժողովրդական ոգու խորքը: Այլ ժողովրդի ընթերցողների համար Թումանյանի պոեմներին (օրինակ՝«Անուշ»-ին) ծանոթանալը ժամանակակից Հայաստանն ու նրա կյանքը ճանաչելու գործում ավելի շատ բան կտա, քան կարող են տալ հատուկ հետազոտությունների հաստ հատորները: Բանաստեղծը ցայտուն ու վառ գծերով վերակենդանացնում է հայրենի ժողովրդի կենցաղը, բայց անում է դա որպես արվեստագետ՝ կյանքի կոչելով անմոռանալի կերպարներ, ոչ այնքան անհատականացված, որքան տիպական... Թումանյանի պոեզիան իր ամբողջության մեջ հենց ինքը Հայաստանն է՝հնադարյան ու նոր, մեծ վարպետի կողմից հարություն առած ու տպավորված ոտանավորի մեջ:

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ

Մեծ է գրականության դերն աճող սերնդի աշխարհայացքի և մտահորիզոնի ձևավորման , ճանաչողական գիտելիքների հարստացման բարոյական և գեղագիտական դաստիարակության գործում : Այս իմաստով լայն հնարավորություն է ընձեռում Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմը : Այն ուսուցիչը, որը մտահոգված է 21-րդ դարի պահանջներով , աշխատում է խթանել,

զարգացնել և խրախուսել իր աշակերտների ինքնուրույն և քննադատական մտածողությունը : Ուսուցչի աշխատանքը ապարդյուն կլինի , եթե ուսուցման ժամանակ չհիմնվի մեթոդիկայի բնագավառում ժամանակակից նվաճումների վրա :

Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի «Հայ գրականություն» առարկայի դասագրքում Հովհ. Թումանյանի կյանքին, գրական և հասարակական գործունեությանը նվիրված դասանյութում աշակերտները ծանոթանում և ուսումնասիրում են «Անուշ» պոեմը :

Դասն սկսելու համար օգտվում եմ «Խորհրդավորություն» մեթոդից: Այն և՛ հետաքրքիր է , և՛ ներգրավվում է աշակերտներին դասապրոցեսի մեջ :Խթանում է աշակերտների ակտիվ մասնակցությանը:

Աշակերտները մի քանի հարց ուղղելով՝ անմիջապես գլխի են ընկնում , թե խոսքն ինչի մասին է : Նրանք արդեն ծանոթ են Թումանյանի կյանքին, գրական և հասարակական գործունեությանը :

Ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրման համար կիրառում ենք «Մտագրոհ» մեթոդը ,որի օգնությամբ պարզում ենք,թե ի՞նչ գիտեն պոեմի մասին :



Սահմանում ենք ,թե ինչ է պոեմը և քանի խմբի է բաժանվում :

Պոեմը՝ իբրև գրական ժանր , ծավալուն չափածո ստեղծագործություն է , որի տարբեր մասերը միավորվում են սյուժեի կամ կերպարի ընդհանրությամբ : Պոեմները բաժանվում են երեք խմբի կամ տեսակի՝ **պատմողական, քնարական , քնարապատմողական** : Պատմողական պոեմին հատուկ են սյուժեի և կերպարների առկայությունը , պատմողական շարադրանքը , դեպքերի և

դեմքերի նկարագրությունը : Այդպիսին է «Սասունցի Դավիթը» : Քնարական է նրա «Դեպի անհունը» , ուր ներկայացվում են հեղինակի մտորումները , խոհերը այս կամ այն երևույթի , անձի , իրադարձության մասին :



«Անուշ» պոեմը դասական իմաստով տիպիկ քնարապատմողական պոեմ է: Այսինքն՝ նրա ընդհանուր կառուցվածքում տեսնում ենք պատմողական հատվածներ , ինչպիսին են «Զըմռան գիշերը » և քնարական հատվածներ , ինչպիսին են՝ առաջին երգի «Կանչում է կրկին. . . » , երկրորդ երգի « Աղջի բախտավոր. . . » , վեցերորդ երգի «Համբարձման գիշեր» հատվածները և այլն :

Պոեմը առանձնահատուկ է նաև նրանով , որ նրանում հանդես են գալիս շատ հերոսներ , բայց գլխավորները Անուշն ու Սարոն են , որոնց հետ հարաբերվում են մյուս կերպարները :

Ապա համառոտ դասախոսությամբ ներկայացնում եմ «Անուշ»պոեմը :

Այս պոեմը թե՛ թեմայի և թե՛ գաղափարական իմաստի տեսակետից ունի շատ լայն ընդգրկում և , ինչպես ճիշտ նկատում է Վ. Բրյուովը , նույնիսկ այլազգի ընթերցողը , կարդալով Թումանյանի «Անուշը» , Հայաստանի և նրա կյանքի մասին ավելի շատ բան է իմանում , քան հասարակագիտական հետազոտությունների ստվար հատորներից: Պոեմում ջրաշատ գետի պես հուժկու թափով հորդում են , միահյուսվում ու իրար հերթագայում և՛ քնարական զեղումներ , և՛ վիպական դրվագներ , կիրառվում են գեղարվեստական խոսքի պատկերավորության ու արտահայտչականության բազմազան միջոցներ : Այդ ամենի շնորհիվ պոեմում հին , նահապետական գյուղաշխարհը արտացոլվում է իր բոլոր կողմերով , բայց առանց մանրամասների : Բանաստեղծը դրան հասել է երկարատև ու քրտնաջան աշխատանքով :

«Անուշ» -ը առաջին անգամ լույս է տեսնում 1892թ. : Բանաստեղծն իր պոեմի սկզբնական տարբերակը մշակում հիմնովին և վերահրատարակում 1902թ. :

Ունկնդրում ենք «Անուշ» պոեմը ՀՀ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի կատարմամբ: Պոեմի պարզ ու պատկերավոր լեզուն , խիստ երաժշտական հանգավորումը , դյուրընկալ խոհեր և զգացումները կօգնեն աշակերտներին՝ ստացած տպավորություններն ու հույզերը ներկայացնել շարադրանքի, նկարի կամ աստունքի տեսքով :

Գրական ստեղծագործությունները, այդ թվում և պոեմը ,բաղկացած են կառուցվածքային առանձնամասերից՝ գլուխներից , ենթագլուխներից :

«Անուշ» պոեմի կառուցվածքն ավելի պատկերավոր և տպավորիչ կլինի,եթե գծապատկերով ներկայացվի:



Քնարա – էպիկական պոեմին ամենասեղմ ծավալում հանճարեղ բանաստեղծն արտահայտել է մի ամբողջ ժամանակաշրջանի գյուղաշխարհի մարդկանց կյանքը, հոգեկան ապրումները , բարքերն ու սովորությունները՝ հայրենի բնաշխարհի աննախադեպ հմայիչ ֆոնի վրա :

Հովհ. Թումանյանի ներշնչման հորդաբուխ աղբյուրը եղել է իր հայրենի երկիրը՝ չքնաղ Լոռին : «Հովհաննես Թումանյանի հետ Լոռում» իր հուշերում Ավ. Իսահակյանը գրում է . «Լոռին նահապետական մի ինքնամփոփ աշխարհ է , հեքիաթի, առասպելի վիպաշխարհ , դյուցազնական աշխարհ ,նր ամեն մի անկյունը ավանդավեպ ,ամեն մի քարը խոսող՝ հերոսական անցյալից . . . Դյուցազնական ու նահապետական Լոռին իր շքեղ բնությունով , իր ավանդներով ու սովորություններով , նրա հինավուրց ժողովուրդն իր

կենսահայացքով , իր ցավերով, նաև իր պայքարով ազատության ու երջանկության համար՝ եղան Օհաննեսի ներշնչարանը։ Օհաննեսն իր բոլոր հոգով , իր հոգու բոլոր կրքով ու կրակով սիրում էր Լոռին։Այստեղից է հորդահոս գալիս Օհաննեսի ստեղծագործության աննախընթաց ժողովրդականությունը »[4] ։

---

4. Ավ. Իսահակյան , Ընտիր երկեր , Երևան , 1948թ. , էջ 438-439

Ցույց տալով բնության մեծ տեղն ու դերը պոեմում / նախերգանքում և ընդհանրապես / , պետք է ընդգծել , որ բնությունը դառնում է կերպար , սիրո ողբերգության հանգրվան։ Հավերժորեն մեռնող և վերակենդանացող բնության մեջ է հավերժանում վաղամեռ սիրահարների դերը։ Եվ պատահական չէ , որ այդ մեծ սիրո կորուստը սգում են բնության ոգիները , սգում է բնությունն ինքը։

Պատահական չէ և պոեմի վերնագիրը։ ***Անուշը*** , բացի անուն լինելուց , դառնում է հատկանիշ։ Հոգու և արտաքինի ներդաշնակությունն է ընդգծվում վերնագրի և հերոսուհու անվան մեջ։ Նշում եմ, նաև , որ դեպքերի , սյուժեի զարգացումը ամենից շատ կապվում ,առնչվում է Անուշի կերպարի հետ , և Անուշն էլ Սարոյի մահից հետո իր անձնազոհությամբ ու մահով հաստատում է մեծ ու անդավաճան սիրո ուժը , մեծությունն ու հավերժությունը։ Հավելեմ նաև, որ ***պահլավերեն անուշ նշանակում է***՝ անմահ , որն էլ հավանաբար ոչ պատահական զուգադիպությամբ կապվում է պոեմին գլխավոր գաղափարի՝ հավերժական , անմահ սիրո գաղափարի հետ։

Հոգեբուխ և իրոք անուշ սիրո դառը վախճանն են սգում փերիներն իրենց հրաշալի հնչյուններով դյութական։

Նախերգանքում ընդամենը մի քառատողով /և ավելի ծավալուն համբարձման առավոտի պատկերում / Թումանյանն ընթերցողին ծանոթացնում է ժողովրդի կողմից սիրված և պահպանված ջանգյուլումի ծիսակատարությանը , ավելացնում նաև, որ ***յոթ / օխտը / թիվը , կույս սափոր*** արտահայտությունը կապված են սուրբ գրքի և քրիստոնեական հավատալիքների հետ։

Թումանյանի ժողովրդայնության ամենավառ արտահայտություններից է «Անուշ» պոեմը : Ինչպես «Թմկաբերդի առումը » և «Հառաչանք» պոեմներում , այնպես էլ «Անուշ»-ում բանաստեղծն իր ստեղծագործության հիմնական իմաստը բաց է անում նախերգանքով ու քնարական վերհուշով :

Փորձենք ,ցույց տալ Վենի դիագրամի միջոցով





Շատ ինքնատիպ ու հետաքրքրական է քնարական վերհուշից անցումը սյուժեին՝ «Սուս, ականջ արա ,հովիվն է կանչում. . . » : Ստեղծվում է իրականություն , իրողության պատրանք, և Թումանյանն աննկատելիորեն ընթերցողին տանում է դեպի այն սարերը , ուր ծնվել ու մեծացել են, սիրել ,ուրախացել ու տառապել են պոեմի հերոսները :

Պոեմի գլխավոր կերպարները

/Անուշ, Սարո,Մոսի/

Սովորական թվացող սիրո պատմությունն ու ողբերգությունը հանչարեղ պոետի գրչի տակ դառնում է գեղարվեստական անթերի մի կոթող , որը հավերժացնում է հասարակ հովվի ու գեղջկուհու սերը : Իսկ այդ սիրո ապրումներն ու տառապանքը խիստ համամարդկային են :

ԱՆՈՒՇԸ նահապետական գյուղի հայ աղջկա հոգու և արտաքին գեղեցկության մարմնացումն է :

Ամեն գրող ունի իր շատ սիրած հերոսը կամ հերոսուհին : Կենսագիրները և ժամանակակիցները վկայում են , որ Լև Տոլստոյը ցնցվել է Աննա Կարինինայի մահով ,խանդաղտանքով սիրել Նատաշա Ռոստովային : Թումանյանն էլ նույնպիսի վերաբերմունք է ունեցել դեպի Անուշն ու նրա ճակատագիրը : Եվ օրինաչափ է ու հասկանալի , որ մեծ գրողի սիրելի հերոսը դառնում է նաև ընթերցողի սիրելին :

Իր հերոսներին Թումանյանը խոսեցնում է պարզ, անմիջական , ժողովրդական լեզվով , որ ոչ միայն չի թուլացնում պոեմի գեղարվեստականությունը , այլ,ընդհակառակը , ապահովում է նրա ժողովրդայնությունը , ստեղծում հոգեցունց քնարական ապրումների բանաստեղծական սքանչելի պատկերներ : Սիրո ինքնամոռաց պահի մեջ ,զգացմունքներին տրվելով , Անուշը անգիտակցաբար ոտնահարում է աշխարհ ու սովորույթ , պարտականություն , հասարակական կարծիք : Մի մռայլ ու տխուր կանխազգացում միշտ վրդովում է Անուշի հոգին , տակնուվրա անում նրա ներաշխարհը / *. . . Ես երբեք, երբեք բախտ չեմ ունեցել , մանուկ օրից են դեռ ինձ անիծել . . . /:*

ՍԱՐՈ - Սարոն էլ գյուղացի իգիթի լավագույն հատկությունների,մարդկային գեղեցիկ գծերի կրողն է պոեմում : Նա էլ նույն , անհանգիստ սիրով է սիրում Անուշին , մոռացել է հանդ ու ոչխար , աշխարհ ու օրենք : Առանց Անուշի ամեն օրը տառապանք է Սարոյի համար : Նրա վեհ ,հզոր սիրո առաջ չնչին ու ողորմելի են դառնում ադաթ ու սովորույթ :

Սարոն սիրո մի չքանդ , մի վսեմ աշխարհ տարավ իր հետ : Նրա մահն ավելի զգաց բնությունը ,քանի որ այդ մահով խախտվեց բնության գեղեցկությունը :

ՄՈՍԻ- Պոեմի կոնֆլիկտն ու ողբերգությունն ավելի է սրվում, խորանում , քանի որ սիրահարների դեմ կանգնած է Սարոյի արդեն թշնամի Մոսին՝ Անոշի եղբայրը : Եվ պատահական չէ , որ Թումանյանն ընտրել է հենց Մոսուն ՝ Անուշի եղբորը : Մոսին էլ հնուց ադաթի գերին է : Լեռնցու հպարտությունն ու պատիվը տրորված են և այն էլ ու՞մ , Սարոյի քրոջ ընտրյալի կողմից : Մոսին իր անունը , պատիվը փրկելու համար պիտի զոհի քրոջ , ընկերոջ երջանկությունը : Նա կատարում է այդ ճակատագրական քայլը՝ դառնալով ակամա մարդասպան : Այս կույր ու դաժան վրեժխնդրությունն իրագործելուց հետո արարքի ամբողջ սարսափելիությունը մերկանում է նրա առաջ: Նա էլ երբեք երջանիկ չի լինի և ամբողջ կյանքում ծանր մղձավանջից , հոգեկան ցավից չի ազատվի : Նա էլ, Անուշի ու Սարոյի նման զոհ է , դատապարտյալ:

<u>Բնագրային հատվածները տե՛ս տեսասահիկում / կցվում է /</u>

Կատարում ենք խմբային աշխատանք : Դասարանը բաժանում ենք 4-5 հոգանոց խմբերի/ 4 խումբ /

<u>Կենտրոններով աշխատանք</u>

Բացահայտողների կենտրոն__Այս խմբին հանձնարավում է ընթերցել պոեմը , կատարել նշումներ , վեր հանել պոեմի հիմնական միտքը և ներկայացնել ընկերներին :

Հետազոտողների կենտրոն- Խմբի անդամները ընթերցում են պոեմը և օգտվելով ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից ՝ համացանց, գրականություն, փորձում են հետաքրքիր նյութեր հանել «Անուշ»- ի վերաբերյալ :

Ստեղծագործողների կենտրոն- Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, կփորձեն այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում,

նկարազարդում, երգ, պար և այլն : /օրինակ՝ բեմականացմաբ կարող են ներկայացնել վիճակ հանելու հատվածը՝ երգով ու պարով/

Գրավոր աշխատանքի կենտրոն- Այս կենտրոնում աշակերտները կընթերցեն տեքստը, այնտեղից կգտնեն և դուրս կգրեն բարբառային բառերը, դարձվածքները , անեծքներն ու օրհնաքները ,որոնք բնորոշ են ժողովրդական լեզվամտածողությանը :

Դասն ամփոփում եմ ***Լուսակիր*** մեթոդի օգնությամբ ՝ ամբողջական պատկերացում կազմելու համար, թե որքանով են յուրացրել նյութը :

Միավորային գնահատումն անցկացվում է Quizizz առցանց գործիքի միջոցով:

Հղումը՝https://quizizz.com/admin/quiz/6345055732d36a001e9216de/1ydvunw1bdvodw21bbvpdw9ins51bjwgtw01ahvttw11ahvtg?selfCreated=true

Արդյունքները ստորև՝



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հովհ . Թումանյանի «Անուշ»-ը ՝ համաշխարհային քանարա-էպիկական պոեմի գլուխգործոցներից մեկը ,ընդարձակելով իր՝ ազգային բովանդակության ու ձևի սահմանները , ձեռք է բերել համամարդկային բովանդակություն : Պոեմի սրտառուչ սյուժեն ,անզուգական բնապատկերները գրավում են ընթերցողին,տեղափոխում նրան հերոսների ցավերով լի աշխարհը ,դեպի չքնաղ Լոռին , ուր հավիտյան ապրում է Անուշի ու Սարոյի մեծ սերը :

Պոեմի ուսումնասիրումը ակտիվ մեթոդների կիրառմաբ,հանգեցրեց այն եզակացության, որ այդ մեթոդների արդյունավետությունը տեսանելի և շոշափելի արդյունք է ապահովում, ինչպես նաև ապահովում են բոլոր աշակերտների ներգրավվածությունը ուսուցման գործընթացում, քննադատական մտածողության, համագործակցային կարողությունների ու հմտությունների ձեռքբերումը:

Աշակերտները մեծ հետաքրքրությամբ են սուսումնասիրում նոր ուսուցանվող նյութը, ձեռք են բերում կայուն գիտելիքներ՝թեմայի վերաբերյալ,կարողանում են ինքնուրույն եզրահանգումներ անել:Աշակերտները բավականություն են ստանում կատարած աշխատանքից,իսկ դա ուսուցչի համար կարևոր նախադրյալ է՝ նորը միշտ փնտրելու և ուսուցանելու գործում :

Տարբեր մեթոդների, եղանակների ու միջոցների բազմազանությունը կնպաստի բոլոր աշակերտների մասնակցությանը դասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մասնագիտական գրականություն

1. **Հովհ. Թումանյան** Երկերի լիակատար ժողովածու /հտ. 3/ Երևան 1989թ.

2. **Ավ. Իսահակյան** «Ընտիր երկեր» Երևան 1948թ.

3. **Հայ նոր գրականության պատմություն** /հատոր 5-րդ / Երևան 1979թ.

Մեթոդական գրականություն

1. Թ. Ջուհարյան «Հայ գրականության մեթոդիկա» Երևան 1972թ.

2. Վ. Ճարտարյան «Գրականության դասավանդման իմ փորձից» Երևան 1988թ.

3. Գ. Կիրակոսյան «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա» Երևան 2015թ.

4. Ս. Խաչատրյան «Ուսուցման արդյունավետ հնարներ» Երևան 2020թ.

5. Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան ,Մ. Գասպարյան «Ուսուցչի ուղեցույց» Երևան 2009թ.

Հավելված 1

ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

Ուսուցիչ - Թերմինե Գևորգյան

Առարկա՝	*Հայ գրականություն*
Դասարան՝ XI^{բ}	Ուստարի 2022-2023
Բաժին	**Հովհաննես Թումանյան**
Դասեր	**Դաս 1**. Հովհ. Թումանյան. կյանքը և գործը **Դաս 2**. Թումանյանի հայրենասիրական քնարերգությունը **Դաս 3**. «Անուշ». պոեմի ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները **Դաս 4**. Պոեմի բովանդակությունն ու հերոսների հոգեբանությունը **Դաս 5**. Թումանյանի քառյակները **Դաս 6**. «Գելը» պատմվածքը **Դաս 7**. «Գիքորը» պատմվածքը
Թեմա	**Դաս 4**. Պոեմի բովանդակությունն ու հերոսների հոգեբանությունը
Բաժնի նպատակը	✓ Ամրապնդել Թումանյանի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ ունեցած գիտելիքը: ✓ Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը:

	✓ Զարգացնել բանավոր խոսքը:
Դասի նպատակը	➢ Ընթերցել վարժ , արտահայտիչ և հասկանալով. ըմբռնելով պոեմի հիմնական գաղափարը ➢ Ներկայացնել և բնութագրել պոեմի գլխավոր հերոսներին՝ Անուշին, Սարոյին, Մոսիին, պոեմից բերված հատվածներով ➢ Մեկնաբանել ստեղծագործության հերոսների ներքին և արտաքին կոնֆլիկտները ➢ Բացատրել՝ ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը , միջավայրը, ինչպես է կերտում կերպարը ➢ Վերլուծել պոեմը և ցույց տալ ազգային և մշակութային միջավայրի ազդեցությունը գլխավոր հերոսների, նրանց փոխհարաբերությունների վրա ➢ Ներկայացնել նահապետական աշխարհի դերը հերոսների ողբերգության հարցում
Վերջնարդյունքներ	✓ Ներկայացնել Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով: ✓ Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների, կերպարների գործողությունների վերաբերյալ: ✓ Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:
Ընդհանրական խաչվող հասկացությունները	**Անհատներ և հարաբերություններ –** Ես-ը և Մենք-ը . Մարդկային հարաբերությունները նահապետական միջավայրում **Ժամանակ և տարածություն –** որտե՞ղ և ե՞րբ . Տվյալ ժամանակաշրջանի մարդկանց կենցաղը
Միջառարկայական կապերը	**ՀԵՊ-** Քրիստոնեական տոներ / Համբարձման տոն/ **Արվեստ** /երաժշտություն,կերպարվեստ/- «Անուշ» պոեմի հիման վրա ստեղծված գրոծերի ուսումնասիրում **Աշխարհագրություն** – Լոռվա աշխարհագրական դիրքը/ բնությունը, կլիման/
Անհրաժեշտ նյութեր , տեխնիկական միջոցներ	գրքեր, տետրեր, գրիչներ, A4 թղթեր , պաստառներ, համակարգիչ,պրոեկտոր
Ուսուցման մեթոդները	Մտագրոհ , , Վենի դիագրամ , T-աձև աղյուսակ

Անցկացման վայրը	Հայոց լեզվի և գրականության դասարան
Գնահատում	Ձևավորող և միավորային գնահատում

Դասի ընթացքը

- **Աշակերտների հաշվառում /1-2 րոպե /**
- **Նախորդ նյութի ամփոփում հարցերի միջոցով՝ 10րոպե**

1. Ի՞նչ է պոեմը և քանի տեսակ է լինում :
2. Ի՞նչ կառուցվածք ունի «Անուշ»պոեմը :
3. Երկու աշակերտ կմոտենան գրատախտակին և համապատասխանաբար կներկայացնեն
   - թե ինչպե՞ս է հեղինակը կառուցել իր երկը
   - մասերից յորաքանչյուն ինչ դեր ունի հեղինակի մտքերը, որոշակի հույզեր, զգացմունքներ ու ապրումներ տեղ հասցնելու հարցում

Նոր նյութի հաղորդում և ամրապնդում 20 րոպե

Պոեմի ընթերցում և մեկնաբանում

-Ունկնդրել «Անուշ» պոեմը ՀՀ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի կատարմամբ

- ներկայացնել տպավորությունները աստունքից , որքանո՞վ է այն ճիշտ փոխանցում պոեմում առկա տրամադրություններն ու հույզերը

-ներկայացնել պոեմի դիպաշարը՝

Նախադրություն

Հանգույց

Գործող. զարգացում

Գագթնակետ

Լուծում

- *Տ-աձև աղյուսակի միջոցով ցույց տալ Մոսիի դրական և բացասական կողմերը*
- *Հանձին Մոսիի ցույց տալ,թե հասարակության սահմանած չգրված օրենքները , կարծրատիպերը ինչ ազդեցություն են թողնում անհատի ձևավորման, նրա հոգեբանության ու վարքագծի վրա*

ընթերցումից հետո անցնել հարցադրումներին

- կարող են արդյո՞ք հասարակության ներսում կարծրացած բարքերը ճակատագրական լինել անհատի համար /կարծիքը հիմնավորել պոեմից բերված համապատասխան օրինակներով /

- որն էր Անուշի և Սարոյի կործանված սիրո և ողբերգության պատճառը

○ *Անդրադառնալով քնարական վերհուշին ,Վենի դիագրամով ներկայացնել Թումանյանի 2 ստեղծագործությունների նախերգանքները / «Հառաչանք» և «Անուշ» /* ○ *Կարդալ նախերգանքն ու վերջերգը ,ներկայացնել նրանց դերը պոեմում* ○ *Ցույց տալ պոեմի այն դրվագները , որոնցում հստակորեն երևում է իրավիճակների զարգացման պատճառահետևանքային շղթայի դերը կոնֆլիկտի զարգացման գործում* ○ *Առանձնացնել գեղարվեստական պատկերավորման արտահայտչամիջոցները , ցույց տալ նրանց դերը պատկեր ստեղծելու, հույզեր փոխանցելու գործում*
Ամփոփում և ամրապնդում 5 րոպե
Համեմատաբար պասիվ մասնակցություն ունեցած աշակերտների համար նախատեսված հարցեր *1. Արդյո՞ք սիրում էիր իրար Անուշն ու Սարոն:* *2. Ի՞նչ էր Անուշի եղբոր անունը:* *3. Անուշի եղբայրն ինչու՞ է զայրանում, երբ հարսանիքի ժամանակ Սարոն նրա մեջքը գետնով է տալիս:* *4. Ո՞վ է սպանում Սարոյին:* *Նշե՛ք ձեր կարծիքը նրա արարքի մասին:* *5. Ինչպե՞ս է ավարտվում Անուշի կյանքը:*

ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Ուսուցիչ - Թերմինե Գևորգյան

Առարկա՝	*Հայ գրականություն*
Դասարան՝ XI^բ	**Ուստարի 2022-2023**
Բաժին	**Հովհաննես Թումանյան**
Դասեր	**Դաս 1.** Հովհ. Թումանյան. կյանքը և գործը **Դաս 2.** Թումանյանի հայրենասիրական քնարերգությունը **Դաս 3.** «Անուշ». պոեմի ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները **Դաս 4.** Պոեմի բովանդակությունն ու հերոսների հոգեբանությունը **Դաս 5.** Թումանյանի քառյակները **Դաս 6.** «Գելը» պատմվածքը

	Դաս 7. «Գիքորը» պատմվածքը
Թեմա	**Ամփոփիչ դաս**
Բաժնի նպատակը	✓ Ամրապնդել Թումանյանի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ ունեցած գիտելիքը: ✓ Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը: ✓ Զարգացնել բանավոր խոսքը:
Դասի նպատակը	➢ Ամփոփել «Անուշ» պոեմը ➢ Ներկայացնել պոեմի ժանրը ➢ Բնութագրել տեսակները՝ պատմողական,քնարական, քնարապատմողական ➢ Պոեմի կառուցվածքը ➢ Բնութագրել պոեմի գլխավոր կերպարներին ➢ Վերաշարադրել պոեմի բովանդակությունը
Վերջնարդյունքներ	✓ Ներկայացնել Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով: ✓ Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների, կերպարների գործողությունների վերաբերյալ: ✓ Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:
Ընդհանրական խաչվող հասկացությունները	**Անհատներ և հարաբերություններ –** Ես-ը և Մենք-ը . Մարդկային հարաբերությունները նահապետական միջավայրում **Ժամանակ և տարածություն –** որտե՞ղ և ե՞րբ . տարբեր մարդկանց կենցաղը , անձնական պատմությունները , ձեռքբերումները , անհատի դերը որոշակի ժամանակաշրջանում և վայրում :
Միջառարկայական կապերը	**ՀԵՊ-** Քրիստոնեական տոներ / Համբարձման տոն/ **Արվեստ/ կերպարվեստ, երաժշտություն, թատրոն,կինո/** - «Անուշ» պոեմի հիման վրա ստեղծված գրածների ուսումնասիրում **Աշխարհագրություն** – Լոռվա աշխարհագրական դիրքը/ բնությունը, կլիման/
Անհրաժեշտ նյութեր ,	գրքեր, տետրեր, գրիչներ, A4 թղթեր ,գունավոր մատիտներ, պաստառներ, համակարգիչ,պրոեկտոր

տեխնիկական միջոցներ	
Ուսուցման մեթոդները	Հինգ րոպեանոց ազատ շարադրանք , կենտրոններով աշխատանք
Անցկացման վայրը	Հայոց լեզվի և գրականության դասարան
Գնահատում	Ձևավորող և միավորային գնահատում

Դասի ընթացքը

- **Աշակերտների հաշվառում /1-2 րոպե /**
- **Նախորդ նյութի ամփոփում հարցերի միջոցով՝ 10րոպե**

1. Քանի՞ խմբի են բաժանվում պոեմները:
2. Ինչպե՞ս կբացատրեք «նախերգանք» բառը:
3. Հանձնարարվում է շարադրել իրենց մտքերը՝ «Եթե ես լինեի Անուշը. . . » /աղջիկներին / և «Եթե ես Մոսին լինեի. . . » /տղաներին/ թեմայով : Ընթերցում և քննարկում ենք տեսակետները :

Նոր նյութի հաղորդում և ամրապնդում 20 րոպե

Քանի որ ,ամփոփիչ դաս է,ուստի,նպատակահարմար է կատարել խմբային աշխատանք

Աշխատանք կենտրոններով

Բացահայտողների կենտրոն – Հանձնարարվում է ընթերցել պոեմը, վեր հանել վերջինիս հիմնական միտքը, մեկնաբանել և ներկայացնել ընկերներին :

Հետազոտողների կենտրոն – Ընթերցում են պոեմի այն հատվածը, որտեղ ներկայացվում է ջանգյուլումը՝ համբարձման տոնը: Համացանցից գտնում և դուրս են գրում տոնի մասին հետաքրքիր տեղեկություններ և ներկայացնում ընկերներին:

Ստեղծագործողների կենտրոն – Բեմականավնում են պոեմից դուրս եկած հատվածը : Եթե կան շնորհալի աշակերտներ,ովքեր կարող են գեղեցիկ երգել և պարել,ներկայացնում են վիճակ հանելու արարողությունը:

Գրավոր աշխատանքի կենտրոն – Պոեմի վերջերգից գտնում և դուրս են գրում կից և խաչաձև հանգավորում ունեցող տողերը :

Բոլոր հատվածներից դուրս են գրում խոսակցական ոճի բառերը՝վերածելով գրական հայերենի:

Ամփոփում և ամրապնդում 5 րոպե

Դասին աշակերտների ցուցաբերած ակտիվությունը՝



Հավելված 2

Մուտքի քարտեր











Հավելված 3

Ելքի քարտեր






Դրական հույզեր
Օգտակար տեղեկություններ տեքստից
Հետաքրքիր փաստեր տեքստից


Դրական հույզեր
Օգտակար տեղեկություններ տեքստից
Հետաքրքիր փաստեր տեքստից